

**Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի
ռեկտոր Ա.Ս.Աղաբաբյանի
2009թ. տարեկան հաշվետվություն**

Հաշվետու ժամանակաշրջանում Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանը (այսուհետ՝ ԵՄԽՀ) գործունեությունը ծավալել է մանկավարժական և գիակրթական մի շարք ուղղություններով:

Կրթական գործունեություն

Համալսարանը ուշադրության կենտրոնում է պահել ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կազմակերպման հետ առնչվող բազմաբնույթ հարցերը: Այդ թվում կարևորվել են նաև բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման հետ կապված աշխատանքները:

Կրեդիտային համակարգ

2008 թվականից համալսարանի ուսումնական գործընթացում ներդրված կրեդիտային համակարգը հաջողությամբ իրականացվել է նաև 2009 թվականին:

Պարբերաբար իրականացվել են կրեդիտային համակարգին նվիրված ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ և լսումներ: Կրեդիտային հենքով ուսումնական ծրագրերի կազմմանը ցուցաբերվել է համակարգային մոտեցում:

Շարունակվում են աշխատանքները կրեդիտային համակարգի ընդլայնման, սովորողների և աշխատակազմի լայն շարժունության ապահովման ուղղություններով:

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողներին ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս.տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր անցկացման ուղղությամբ:

Ուսման վարձերի զեղչերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում

2008 թ.-ի բուհի ուսումնական պլանները արմատապես փոփոխվել են և համապատասխանեցվել ուսուցման կրեդիտային համակարգին: Ինչքան էլ լավ կազմված լինեին այդ ուսումնական պլանները, համենայն դեպս առաջին անգամ ներդնելով բնականաբար անհրաժեշտություն է առաջանում դրանք վերանայելու և համապատասխան մասնագետների կողմից արված դիտողությունները և առաջարկությունը հաշվի առնելով կատարելու որոշակի փոփոխություն:

2009թ.-ին բոլոր մասնագիտություններով վերանայվեցին ուսումնական պլանները և համապատասխան փոփոխություններից հետո այս ուսումնական տարում դրանք դրվեցին գործողության մեջ:

Արժե նշել, որ ուս. պլանի վերանայման գործընթացը բուհում մենք պետք է իրականացնենք առնվազն տարին մեկ անգամ և, եթե անհրաժեշտություն կա կատարելու փոփոխություններ, ապա դրանք պետք է կատարվեն:

2009թ.-ից բուհը ամբողջությամբ անցավ կրեդիտային համակարգով ուսուցման, ներառյալ նաև մագիստրատուրայում:

Ընդունելության նախապատրաստում

Հաշվետու տարում ուշադրության կենտրոնում են եղել պետական մասնագիտական հաստատությունների շրջանավարտների հետ տարվող աշխատանքները:

Կազմակերպվել են բաց դռների օրեր, որտեղ ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթային դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ ուսումնական վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների դիմորդների թվի անընդհատ աճը:

Ընդունելություն

Հաշվետու ուս.տարում բուհ են ընդունվել 170 ուսանող,

որից մագիստրատուրա – 7

բակալավր (առկա) – 119

բակալավր (հեռակա) – 44

Օտարերկրացիներ ընդունվել են ընդամենը - 9

մագիստրատուրա – 2

բակալավր (առկա) – 4

բակալավր (հեռակա) – 3

Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

Հաշվետու ուս.տարում բուհ են ընդունվել 868 ուսանող

որից մագիստրատուրա – 13

բակալավր (առկա) – 652

բակալավր (հեռակա) – 203

Սովորում են օտարերկրացիներ - 87

մագիստրատուրա – 5

բակալավր (առկա) – 59

բակալավր (հեռակա) – 23

Համալսարանի հիմնական ուսանողական թվակազմում մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 4% է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 9.39 % և 16 %: Ընդհանուր առմամբ 2008-2009 ուս. տարում բուհում սովորել են 980 ուսանող, որից 11-ը մագիստրատուրայում, իսկ 968-ը բակալավրիատում, այդ թվում առկա բաժնում 812 ուսանող, իսկ հեռակա բաժնում 137 ուսանող:

Համալսարանի ուսանողների համար հավատարմագրված 6(վեց) մասնագիտությունների գծով ավարտական քննություններին թույլատրվել են մասնակցելու 235 ուսանող, որոնցից 222-ը բոլոր քննությունները

հանձնել ու միայն դրական գնահատականով, այդ թվում նրանցից 25-ը ստացել ու միայն <<գերազանց>> գնահատակ, որոնցից 18-ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ ստացել է գերազանցության դիպլոմ: Պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է

	թույլ մասն	մասնակց.	միայն դիպլ.գնահատ.	միայն գեր.	գերազ.դիպլ.	դիպլ.չստ.
Հայոց լ. և գրակ	33	33	32	10	7	1
Օտար լ. և գրակ.	22	22	22	2	2	-
Ինֆ. և կիր. մաթ	21	21	17	5	3	4
Մանկ. և մեթոդ.	56	56	50	1	-	6
Միջ. տնտես. հարաբ.	45	45	43	2	2	2
Իրավագիտ.	58	58	58	5	4	-
Ընդամենը	235	253	222	25	18	13

Դասախոսական կազմ

1. Դասախոսների ընդհանուր թիվը – 64
 - որից հիմնական – 34
2. Գիտ. դոկտոր կամ պրոֆեսոր - 5
 - որից հիմնական – 1
3. Գիտ. թեկնածու, դոցենտ - 31
 - որից հիմնական – 12
4. Դասախոս կամ ասիստենտ – 28
 - որից հիմնական – 21

**Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների
պատրաստում**

ԵՄԽՀ դասախոսական կազմի մասնագիտական որակն ու գործունեությունն ապահովելու նպատակով իրականացվում են մի շարք գործառնություններ:

Համալսարանի դասախոսների ուժերով հրատարակվել են հետևյալ գիտական և ուսումնամեթոդական հոդվածներն ու ձեռնարկները:

- 1) Բաղդասարյան Մարիաննա – English for Biomedical Engineers (ուս.ձեռնարկ)-ՀՊՃՀ-2009թ.
- 2) Գալստյան Բակուր 1) Գոյափիլիսոփայությունը և Վ.Սարոյանը, <<Մ.Խորենացի>> հանդես, Երևան- 2009թ
2) Սարոյան ճշմարտության ետևից-Խ.Աբովյանի Անվ.հայկական մանկավարժական համալս. <<Սփյուռք>> գիտաժողովի նյութեր - Երևան- 2009թ.
- 3) Քրոյան Գագիկ - Bivar . Interpolation with Integrals , Proc.of the Erevan State University,Erevan-2009
- 4) Արաքելյան Վալերի և ուրիշներ
1) Ռազմավարական այլընտրանքների ընտրության հնարավոր չափանիշները: Երևան 2009թ.
2) Արտադրանքի շերտավորման ռազմավարության մի քանի հարցեր Երևան- 2009թ.
3) ՏԳՎ արդի խնդիրները- Երևան- 2009թ.
4) Սարքեթինգը որպես Ձեռներեցության կառավարման գործառնություն. Լրաբեր 76, հատոր 1 №2- Երևան- 2009թ.
- 5) Կարագույան Հասմիկ - Վ.Շուշանյան <<Կյանքվեպըն մըն է>>-Մ.Խորենացի
1) հանդես- Երևան- 2009թ.
2) Էկզիստենցիալիզմը և Ֆրանսահայ արձակը, Մ.Խորենացի հանդես, Երևան- 2009թ
- 6) Մկրտչյան Սարգիս - Օ.приближении в среднем полинамалие с пропусками на множествах .Кара Тодори
Հարությունյան Արմեն - Жизнь и научно педагогическая деятельность О.Гиндяна, Вестник –Маноб-2009г.
2. Սիմոն Գյուլամիրյանցի <<Արարս>> հանդեսը գեղարվեստական դասախոսի մասին, կրթությունը և գիտությունը Արցախում 3-4 .2009թ
3. Журнал “Семья” С.Гамбачяна об эстетическом востегани, ”Вестник” МАНЭБ -2009.

Նիկողոսյան Արամ –Մարքեթինգը որպես ձեռնարկության կառավարման գործառույթ, ՀՊՃՀ Լրաբեր-76, 2009թ
Հակոբյան Սամիկոն –Փոքր հզորության էլեկտրաշարժիչների մոդելավորումը MATLAB ծրագրային փաթեթի կիրառմամբ: ՀՊՃՀ, Եր.- 2009թ.
2) Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում, Եր.- 2009թ.
Թորոսյան Դավիթ – Плоская неоднородная задача с трещинами. Журнал "М.Хоренаци" Ереван-2009г.

Կատարվել են ստուգումներ

2009թ. հուլիսի 7-ից 8-ը ԵՄԽ-ում, համաձայն ՀՀ ԱՎԾ նախագահի 25.06.2009թ. №1-177 հանձնարարականի, Երևանի Մոմսես Խորենացու անվ. համալսարանում իրականացվել են պետական վիճակագրական հաշվետվությունների ստուգումներ, որոնց ընթացքում խախտումներ և թերություններ չեն հայտնաբերվել:

Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել հետևյալ ուղղություններով:

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում:
 - <<Մոմսես Խորենացի>> գիտական հանդեսի հրատարակում;
 - Մեթոդական աշխատանքների րականացում;
 - Համացանցային ռեսուրսների զարգացում և համացանցային տիրություն ԵՄԽ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում;
 - Ֆոտո և տեսանյութերի ստեղծում և արխիվացում;
 - Պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:
- Հետևողական աշխատանք է կատարվել ԵՄԽ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: ԶԼՄ-ի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՄԽ-ին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Աշխատանքը ուսանողների և շրջանավարտների հետ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄԽ ուս.խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի

և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈւՆԽ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողների գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաներ, սեմինարներ՝ ԵՄԽՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու համար:

Կնքվել են պայմանագրեր

Ուսանողների համար պրակտիկա կազմակերպելու համար՝

- 1) Երևանի թիվ 135 դպրոց
- 2) <<Գործք>>ՍՊԸ
- 3) <<Մաստեր Պլուս>> լեզուների և համակարգչային գործի ուսուցման կենտրոն
- 4) <<Արդշինինվեստբանկ>>ՓԲԸ
- 5) ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ: